

ԳԵՈՐԳԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ (ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ՂԱԶԱՆԻ ԼԻՎԱՆ ԸՍՏ ԹԻՖԼԻՍԻ ՎԻԼԱՅԵԹԻ 1728 թ. ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ՀԱՐԿԱՄԱՏՏԱՆԻ

Վրաց հետազոտողներ Սերգի Զիքիայի և Նոդար Շենգելիայի աշխատասիրությամբ լույս տեսած Թիֆլիսի *վիլայեթի*¹ ընդարձակ հարկամատյանի երկրորդ հատորում², բացի Տաշիրից և Փամբակից, կարելի է գտնել նաև այլ շրջանների օսմանյան հարկացուցակներ, որոնք այդ ժամանակ գտնվելով հիշյալ վիլայեթում՝ անմիջականորեն առնչվում են Հայաստանին: Այս անգամ մեր ուշադրությունը սեռել ենք Ղազանի օսմանյան ընդարձակ հարկացուցակի հետազոտությանը: Կարծում ենք, որ վերջինիս ընտրությունը հիմնավորված է, քանի որ այն պատմական Հայաստանի Ուտիք նահանգի մաս է կազմել³:

Հատկանշական է, որ Տաշիրի⁴, Փամբակի⁵ 1728 թ. օսմանյան հարկացուցակների ուսումնասիրության համանմանությամբ այս

¹ Օսմանյան ամենամեծ վարչական միավորը, նահանգ: Մինչև XVII- XVIII դարերը Օսմանյան կայսրությունում «վիլայեթ» և «էյալեթ» անվանումները գործածվել են նույն իմաստով: Հետագայում վերջնականապես ընդունվում է «վիլայեթ» եզրույթը: Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հ. Բ, կազմեց Սաֆրաստյան Ա. Խ., Երևան, 1964, էջ 283:

² 1728 թ. Վրացի տոմարների շրջանագրի ծանոթագրությունները և Վրացի տոմարների շրջանագրի ծանոթագրությունները, Երևան, 1964, էջ 283:

³ Երևանյան Մ. Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», քարտեզագրեց՝ Գործակալյան Հ. Ն., Երևան, 1976:

⁴ Միրզաբեկյան Գ., Տաշիր գավառը 1728 թ. օսմանյան հարկացուցակում, Պատմա-բանասիրական հանդես, № 3, Երևան, 2017, էջ 134-138:

Շնորհիվ տեղանունների բառարանի պարզել ենք, որ Ջողազը համապատասխանում է ներկայիս ՀՀ Իջևանի շրջանի Բերքաբեր բնակավայրին¹⁴: Կարևոր է նկատել, որ Ջողազ տեղանունը ժամանակակից հայերենում հանդիպում է նաև «Ջովազ» եզրույթով¹⁵, իսկ օսմաներենում այն կարելի է ընթերցել երկու ձևով էլ: Սակայն հաշվի առնելով առաջինի առավել տարածվածությունը, ուստի հետայսու կկիրառենք այդ տարբերակը: Ջողազից մի փոքր հյուսիս է գտնվել Աքսիբարը, որը տեղակայված լինելով Աղստև գետի ձախ վտակի հարևանությամբ, համապատասխանում է Իջևանի Ոսկեպար բնակավայրին¹⁶:

Ինչ վերաբերում է մյուս երկու *նահիեին*, ապա առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով. տեղորոշել ենք ամեն մի *նահիեից* մեկական գյուղ և ըստ այդմ մոտավոր պատկերացում կազմել վերոնշյալ երկու վարչական միավորի աշխարհագրական դիրքի մասին: Ղազախի *լիվայի* առաջին *նահիեից* ընտրել ենք Կոզման (օսմաներենում՝ Բոզման¹⁷) գյուղը, որը գտնվում է Կոդբ գետի վերին հոսանքում, ներկայիս Նոյեմբերյան քաղաքից 8 կմ. հարավ-արևմուտք¹⁸: Դատելով դրանից՝ կարող ենք եզրակացնել, որ այն համապատասխանում է ներկայիս համանուն գյուղին: Դրան գուցահեռ Ղազախի վերջին՝ չորրորդ *նահիեից* առանձնացրել ենք Լալաքենդի գյուղը¹⁹, որը համապատասխանում է այսօրվա Վազաշենին²⁰:

Հարկ է նշել, որ տեղանունների տեղորոշման տեսանկյունից սույն հոդվածում բավարարվել ենք միայն հիշյալ *նահիեների*

¹⁴ Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ, Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 414: (Այսուհետև՝ Տեղանունների բառարան, հ. 1):

¹⁵ Տեղանունների բառարան, հ.1, էջ 415:

¹⁶ Նույն տեղում, էջ 522:

¹⁷ 1728 թվականի տոմարի շրջանի ծանուցում, ֆոնդ 2, թ. 694.

¹⁸ Տեղանունների բառարան, հ. 1, էջ 185:

¹⁹ 1728 թվականի տոմարի շրջանի ծանուցում, ֆոնդ 2, թ. 722.

²⁰ Տեղանունների բառարան, հ. 1, էջ 555:

ուսումնասիրությամբ և առանձին-առանձին չենք անդրադարձել նրանց կազմի մեջ մտնող գյուղերին: Բանն այն է, հնարավորինս սեղմ ժամկետներում նախատեսում ենք նահիե առ նահիե հրատարակել Ղազախի լիվախի բոլոր բնակավայրերը՝ ընդգրկելով նաև աշխարհագրական բնույթի տեղեկություններ:

Վերևում խոսելով հարկամատյանի բնագիր տեքստի և վրացերեն թարգմանության համեմատության մասին, կարելի է այն շոշափել տեղանվանագիտության համատեքստում: Օրինակ՝ Մերգի Ջիքիան և Նոդար Շենգելիան Ջոդագ *նահիեն* ընթերցել են Ջավադ²¹, իսկ Աքսիբարը՝ Աքսաբադ²²: Հետևելով այդ օրինակներին՝ անորոշ կլինեք դրանց տեղադրությունը:

Բացի *նահիեների* աշխարհագրական տեղադրությունից, մեր առջև դրել ենք հետևյալ հիմնահարցերը. պարզել *նահիեների* բնակավայրերի թիվը, ուսումնասիրել ժողովրդագրական պատկերը, բնակավայրերից գանձվող հիմնական հարկերը և քննել ընդհանուր հարկադրույքների չափը:

Ղազախի օսմանյան հարկամատյանից պարզվում է, որ նահիեններն իրենց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական համապատկերով բավականին տարբերվել են միմյանցից: Ըստ հաջորդականության առաջին նահիեն՝ Անչասը (°), բաղկացած է եղել 42 գյուղից: Բացի դա, գյուղում եղել է 9 քրջլաք²³, 5 մագրայե²⁴: Հետաքրքրական է, որ բնակավայրերի փոքր մասն է միայն բնակեցված եղել: Կարելի է հաշվել շուրջ 33 բնակավայր՝ ներառյալ քրջլաքներն ու մյուս բնակատեղիները, որոնք լքված էին:

Մեծ է կարևորությունը օսմանյան ընդարձակ հարկացուցակների՝ աշխարհագիր մատյանների միջոցով, ուսումնասիրելու

²¹ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 421.

²² Նույն տեղում, էջ 439:

²³ Ձմեռանոց, ձմեռվա արոտավայր Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 366:

²⁴ Մշակվող հողատարածք, որը գուրկ էր մշտական բնակեցվածությունից: (H.984) 1576-1577 Tarihli Timar Ruznamçe Defterinde Göre Karaman Eyaleti, Yüksek Lisans Tezi, Konya, 2010, էջ 113:

ժողովրդագրական ընդհանուր պատկերը: Առաջին *նահիլեի* գրանցամատյանից կարելի է եզրակացնել, որ բնակչությունն ըստ դավանանքի բաղկացած է եղել մահմեդական և ոչ մահմեդական՝ քրիստոնյա բնակչությունից: Հատկանշական է, որ հարկացուցակում ոչ մահմեդական բնակչությունն առաջին հերթին առանձնանում է հարկատուների անձնանուններով և նրանցից պահանջվող համապատասխան հարկատեսակներով, որոնք, ի տարբերություն մահմեդականների, միայն իրենք էին վճարում: Ավելին՝ օսմանյան հարկամատյաններում անձնանունների ուսումնասիրությունը էթնիկ պատկանելությունը որոշելու լավագույն եղանակներից է: Այսպիսով, ոչ մահմեդականների շրջանում պարզելով՝ հայերի բացարձակ մեծամասնություն կազմելու փաստը, այնուամենայնիվ, շարադրանքում ժողովրդագրական տվյալները ներկայացնելիս օգտագործել ենք քրիստոնյա և մահմեդական եզրույթները:

Վերադառնալով՝ ժողովրդագրական ուսումնասիրության բուն առանցքին՝ պետք է փաստել, որ Անչաս (°) գյուղախմբում մեծամասնություն էին կազմում քրիստոնյաները: Հաշվվում է 117 քրիստոնյա և 81 մահմեդական հարկատու: Պետք է նկատել, որ քրիստոնյա բնակչության շրջանում նշված չէ որևէ ամուրի, այնինչ նման սոցիալական կարգավիճակ ունեւ երեք մահմեդական, որից երկուսը միևնույն ձմեռանոցից էին²⁵: Ստացվում է, որ եղել է նույնքան քրիստոնյա ընտանիք, իսկ մահմեդականներինը՝ համապատասխան թվից երեքով պակաս: Սակայն ընդհանուր առմամբ, գյուղախումբը աչքի չի ընկել հոծ բնակչությամբ: Ամենաբնակեցված գյուղը եղել է քրիստոնեաբնակ Կողբը²⁶ (օսմաներենում Քուլբ²⁷), որտեղ եղել է 25 ընտանիք:

Հազախի 1728 թ. օսմանյան հարկամատյանում թվով երկրորդ գյուղախմբում՝ Ջողագում, պատկերը մի փոքր այլ էր: Այն բաղկացած է եղել ավելի շատ բնակավայրերից: Հարկացուցակի հետագո-

²⁵ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 698.

²⁶ Տեղանունների բառարան, հ. 1, էջ 266:

²⁷ Նույն տեղում, էջ 694:

տությունից պարզ է դառնում 63 գյուղի, 3 մագրայեի գոյության մասին: Ի տարբերություն Անչասի (°), այստեղ 1728 թ. դրությամբ լքված բնակավայրերի թիվը անհամեմատ քիչ լինելով՝ կազմել է 14-ը: Այնուամենայնիվ, սա չի կարող փաստել խիտ բնակչության առկայության մասին, քանի որ նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղաբնակները հիմնականում ցրված էին տարբեր բնակավայրերով՝ երբեմն տեղերում կազմելով ընդամենը 2-3 ընտանիք: Բացառություն է կազմել միայն Հսքիփաշա (°) գյուղը, որտեղ գրանցված է եղել 73 մահմեդական հարկատու²⁸:

Ջողազը տարբերվում է նաև բնակիչների ժողովրդագրական պատկերով, որտեղ քանակական առավելությունը ոչ թե քրիստոնյաների՝ այլ մահմեդականների կողմն է եղել: Կարելի է հաշվել շուրջ 416 մահմեդական հարկատու, որից 71-ը՝ ամուրի: Դրան հակառակ, քրիստոնյա հարկատուները 168-ն էին: Ելնելով հարկամատյանից՝ նրանց շրջանում ամուրիներ չեն եղել:

Ուսումնասիրելով ժողովրդագրական կազմը՝ հանդիպեցինք ուշագրավ երևույթի: Ջողազի որոշ գյուղերում՝ Քուչուք Ապարանում²⁹, Վարնիքում (°)³⁰, Խոջավանքում³¹ և Խոշքութանում (°)³², գրանցված հարկատուների անձնանունները բացարձակ մեծամասնությամբ հայկական են, սակայն նրանցից գանձվող հարկերից որոշները մահմեդականների համար են նախատեսված: Ուշագրավ է, որ նմանատիպ խնդրի առնչվել ենք նաև 1728 թ. Փամբակի օսմանյան հարկամատյանը ուսումնասիրելու ժամանակ³³: Մենք այժմ էլ կարծում ենք, որ նրանց քրիստոնյա համարելու հիմնավորում չունենք, ուստի նրանց ընդունել ենք իբրև մահմեդականներ:

²⁸ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 701-702.

²⁹ Նույն տեղում, էջ 700:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում, էջ 701:

³² Նույն տեղում:

³³ Միրզաբեկյան Գ., Փամբակ գավառը 1728 թ., էջ 101-102:

1728 թ. Ղազախի լիվայի հաջորդ գյուղախումբը՝ Աքսիբարը, ունեցել է 67 գյուղ, 3 մագրայե: Աքսիբարը նույնպես աչքի է ընկել դատարկված գյուղերով, որոնք ընդհանուր 37-ն էին: Կարևոր է նշել, որ այն տարբերվում էր վերոնշյալ բոլոր գյուղախմբերից, թերևս նրանով, որ կային մի քանի առավել խիտ բնակչությամբ բնակավայրեր: Դրանց շրջանում կարելի է առանձնացնել Բողազքելիսե գյուղը³⁴, որը ոչ միայն ամենամեծ բնակչությունն ուներ *նահիեում*, այլ նաև՝ բացառապես կազմված էր քրիստոնյաներից:

Աքսիբարում, ինչպես նախորդող գյուղախմբերում, ապրել են ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչություն. ընդ որում նրանք բնակվել են առանձին-առանձին գյուղերում: Աքսիբարում քրիստոնյա բնակչությունը անհամեմատ ավելի շատ է եղել՝ կազմելով 340 ընտանիք: Մահմեդականների հարկատուների թիվը եղել է շուրջ 244, որոնցից 34-ը՝ ամուրի:

Ղազախի վերջին՝ գյուղախումբը և՛ բնակչության, և՛ բնակավայրերի թվով աչքի է ընկել ամենանվազ ցուցանիշներով: Օսմանյան հարկացուցակի քննությունից կարելի է հաշվել ընդամենը 23 գյուղ և 1 մագրայե: Անհամեմատ ավելի շատ էին լքված բնակավայրերը և ընդամենը 4-ն էր բնակեցված: Հատկանշական է, որ գյուղախումբում եղել են բացառապես քրիստոնյաներ, որոնք կազմել են 33 ընտանիք:

Օսմանյան ընդարձակ հարկացուցակների ուսումնասիրության գործում բավականին մեծ տեղ է զբաղեցնում հարկերի և հարկաչափերի ընդհանուր քննությունը, որոնք պատկերացում են տալիս տվյալ երկրամասի սոցիալ-տնտեսական իրադրության մասին: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ այդ համատեքստում Ղազախի լիվայի հարկատեսակների քննությունը հարուցում է որոշ դժվարություններ, քանի որ օսմանյան իշխանավորները ճշող մեծամասնությամբ հարկերն արձանագրել են ընդհանուր հարկաչափի տեսքով, այլ ոչ թե առանձին-առանձին: Վերջին իրողությունն առկա է գլխա-

³⁴ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 715-716.

վորապես առաջին նահիեում և մասամբ՝ Ջողագում: Մակայն դրանով հանդերձ կարելի է հասկանալ, որ հիմնական հարկերը ստացվել են հացահատիկային մշակաբույսերից՝ ցորենից և գարուց: Իսկ մնացյալ հարկատեսակները գրեթե նույնությամբ կրկնվում են, ինչ կարելի է տեսնել օրինակ՝ Տաշիրում և Փամբակում:

Մեծ կարևորություն են ներկայացնում ընդհանուր հարկաչափերի քննությունը, որը հնարավորություն է տալիս առավելապես հասկանալ բնակավայրերի տնտեսական ներուժի մասին: Օսմանյան սկզբնաղբյուրի հետազոտությունը ցույց է տալիս, որ Անչաս (՝) *նահիեում*՝ ամենաբարձր հարկը գանձվել է Կողբ գյուղից³⁵, որը կազմել է 24.000 աքչե³⁶: Կողբին հաջորդել են Բարանա³⁷, Միսխամ³⁸ գյուղերը, որոնցից համապատասխանաբար գանձվել է 21.600 և 10.000 աքչե: Մյուս գյուղերից սահմանվել են անհամեմատ ցածր հարկաչափեր:

Հարկ է ընդգծել, որ տնտեսական զարգացման տեսանկյունից գրեթե նույն պատկերն էր Ջողագում: Այնտեղ ամենաբարձր հարկաչափը գրանցվել է Խոջավանք³⁹ գյուղում և այն կազմել է 12.000 աքչե: Այդ ցուցանիշով հաջորդում են՝ Էսքիփաշան⁴⁰ (՝) և Գունանը⁴¹:

Հարկադրույքների ավելի բարձր լինելու ցուցանիշով Ղազախում առանձնացել է Աքսիբարը: Ամենամեծ թվով բնակչություն ունեցող Բողազքիլիսե գյուղը պարտավորվել է կենտրոնական իշխանություններին վճարել 25200 աքչե⁴²: Կան նաև այլ խոշոր հարկաչափե-

³⁵ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 694.

³⁶ Արծաթե դրամի միավոր: Օսմաներեն նշանակել է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը հավասար էր 3.06 գրամի: Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. կանոննամեներ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Մաֆրաստյան Ա. Խ. և Զուլայանի Մ. Կ., Երևան, 1964, 128 էջ:

³⁷ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 695.

³⁸ Նույն տեղում, էջ 696:

³⁹ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 701.

⁴⁰ Նույն տեղում, էջ 701-702:

⁴¹ Նույն տեղում, էջ 705:

⁴² Նույն տեղում, էջ 716:

րով գյուղեր, որոնց տնտեսական ներուժը էականորեն տարբերվել է մնացյալ բնակավայրերից:

Ղազախի վերջին *նահիեն*⁴³ թիրաքը (°), ուներ հարկաչափերի ամենացածր ցուցանիշն ամբողջ *լիվայում*: Ամենավճարունակ գյուղը համարվել է՝ Խանքենդին, որից սահմանված էր 8400 աքչե⁴³: Մյուս բոլոր գյուղերի հարկադրույքները տատանվել են 1200-ից 5000 աքչեի միջև:

Այսպիսով, թիֆլիսի վիլայեթի 1728 թ. օսմանյան հարկամատյանի ուսումնասիրության շնորհիվ փորձեցինք հնարավորինս ճշգրտել Ղազախի *լիվայի* աշխարհագրական սահմանները: Հետազոտությունից պարզ դարձավ, որ դրանք արևմուտքում սկիզբ են առել գլխավորապես Կողբ գետի վերին հոսանքից: Անշուշտ, հետագայում գյուղանունների տեղադրման շնորհիվ, փորձելու ենք նշել ամբողջական սահմանները:

Վերոնշյալ օսմանյան հարկացուցակի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց տիրապետել 1728 թ. Ղազախի *լիվայի* ժողովրդագրական պատկերին, ըստ որի՝ քրիստոնյա բնակչությունը 4 *նահիեից* 3-ում ուներ քանակական առավելություն: Խոստուն էին նաև հարկաչափերի ուսումնասիրությունը, որը կարևոր նշանակություն ունի Ղազախի սոցիալ-տնտեսական ներուժի բացահայտման և գյուղախմբերի միջև համեմատություն անցկացնելու համատեքստում:

⁴³ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 722.

GEORGI MIRZABEKYAN
(IOS)

**QAZAKH LIVA ACCORDING TO THE OTTOMAN GREAT
DEFTER OF TBILISI VILAYET 1728**

Qazakh, which was a part of Utik Province of Greater Armenia, had a *Liva* status in the Great Defter of Tbilisi *Vilayet* 1728 and consisted of 4 *Nahies*: Anchaz (?), Joghaz, Aksibar and Tirak (?). At the current time, Joghaz is the same as today's Berkaber, and Aksibar corresponds to the Voskepar village. They are both situated in Tavush Province of the Republic of Armenia. According to the Ottoman tax register of Qazakh *Liva*, Aksibar has 67 villages, which is the biggest index among the *Nahiyes*. Also, Aksibar has a specific potential in socio-economic sphere in the *Liva*. It can be seen from the research of taxes which have high rates in Qazakh.

The Ottoman Great Defter of Tbilisi is a very important source for the research of demography as well. It turns out that besides the Joghaz, Christian population (Armenians) dominated in Anchaz (?), Aksibar. And the last Nahie of Qazakh was fully populated by Christians.